

Նա արձակեցէ, և վերստին անլոյծ կապեսցէ: Վանորոյ և «մի խարիք, ոչ պոռնիկը, ոչ կուսպարիշոր, ոչ շոնք…… զարբայութիւն Աստուծոյ ոչ ժառանգիւն……»:<sup>2</sup>

Ա. Տէր. ՄԻՔԵԼ ԵՍԱ.

(Կը շարունակուի.)



## ԳիՒՂԸԿԵՆ ԲԱՀԱՆԱՅԻ ՔԱՐՈԶ.

ՍԻՐԵԼԻ ԺՈՂՈՎՈՒԹԻՒՆ:

**Մ**տիկ արէք էս օր Զեղ մի քարոզ խօսիմ. դուք էնպէս կարծումէք, որ քարոզ միայն վարդապետներ կուտան, որպէս թէ Քրիստոսի Աւետարան, Աստուծաշունչ գիրք, մեր նախնի սուրբ Հայրապետաց խրատներ և ճառեր միայն վեղարաւոր վարդապետներուն առանձին շնորհուած է, նորա միայն արտօնութիւն և պաշտօն ունին եկեղեցոյ բեմէն քարոզ խոսել:

Ոչ էդպէս չէ, քահանան էլ նոյնչափ իրաւունք ունի ամէն ժամանակ քարոզ խօսել խրատ տալ իւր գիւղական ու ծխական ժողովուրդին, ամէն տօնի և կիրակի օրերում քանի որ մեր գիւղական ժողովուրդ այնպէս կը լինի, որ տարիներով վարդապետի երես չեն տեսնար: Վարդապետներ երբեմն ամպի պէս կուգան ու կանցնեն, մի կաթիլ անձրեւ չեն թափեր մեր ցամքած երկրին վրայ: Հապա ո՞յ պիտի խոսի Զեղ Աստուծոյ բան ու պատուէրներ, Քրիստոսի Աւետարան, Առաքելոց և մարգարէից ընթերցուածներ, որ միշտ կը կարգացուին եկեղեցոյ մէջ և դուք միայն լսումէք և ոյինչ չէք հասկանում:

Նիտակ խոսութիւննելով կամունեմ խոսելու, մեր քահանաներս էլ մեր կարգացած բան չենք հասկանում: որովհետեւ զարոցի երես երբէք տեսած չեմք: Այսա համար Աստուծոյ

բան չըի ձայնի որէս կը լսուի մեր ականջին, մեր եկեղեցւոյ տինէն բղիսած այն կենդանի ջուրէն կարսդ չեմք իմել ու զավանակ: Ո՞՛չ այնպէս պասքած ու ծարաւած դուրս կելնեմք եկեղեցիէն, մեր և դուք թէ քահանան, թէ ժողովուրդ՝ առհասարակ մի անապատ դարձած ենք, ուր երբէք ջուր յի կայ կամ այնպիսի պինդ ու կորդ անշակ մի երկիր եղեր է մեր սիրաւ զոր թէ վարել ուզեմք՝ մեր գութանի խոսի չի բանիր, ոչ միայն մեր, այլև նոյն խոկ վարդապետի գաւազանի խոփն ևս զոււարաւ կը վարէ:

Գիւղէք դուք, ժողովուրդ, մեր քահանայից գութանի խոսի արգէն անպիտան և գուլէ, սրովհետեւ ոչ գարոցի հնոցի մէջ մոտած են և ոչ էլ կրթութեան կռանսի ծեծուած ու մըխուած են, մեք էնպէս խամ երկաթ մնացած ենք, մեր խոսի պողպատով զօդուած չէ: Հապա ի՞նչպէս կարող եմք ժողովուրդի կորդացած ու խստացած երկիր վարել:

Այժմ ասացէք դուք, ժողովուրդ, այս դատաստան ձեղ կը թողտում, յանցանկն ո՞ւմէ, երբ գիւղական քահանաներ տգէտ և անիմաստ են, յանցանք եսիսկապահին է, որ կը ձեռնադրէ, թէ Աջմիածնայ բարձր Հոգեւոր Առենին է, որ կը թոյլատրէ: Ո՞ւ ժողովուրդին է, որ կը թափանձէ, կը պահանջէ, Համախօսական ժողովնիք կը կազմէ, Հարիւրաւոր սաորագրութիւններ թափումեն ինդրագրին վրայ, վաւերական կնքով էլ գրոշմելով խմբովին գիւղում են Էջմիածնայ դուռը, այսպէս խօսում են:

Է՞ Հայուիկ, Հօգուգ մեռնինք, եկեր ենք քահանայ կուզենք, ահա բերենք մեր գիւղի ափացուն, որ քահանայի զաւակ է, մեր գիւղի մէջ ծնած է, մեք իւր մանկութենէն գիւղենք սորտ վարքն ու բարք, պարկեցտ է: Հեղ ու խոնարհ է, վաղօւց ի մեր եկեղեցւոյն կը ծառայէ, դպրութիւն կանէ, պատարագիչ քահանային սպասաւորում է և այն, մեզ շատ ու բաւական է:

Հայրիկ գիւղալոյի որ ամէն օր քահանայի ձեռնադրութեան ինդիր կայ, մի ձեռնադր-

1. Ա. Գ. Տամանցացի, ամրան Քարոզք. էջ. 197.

2. Կ Կորնթ. Զ. 10:

րութեան Մաշտոց մօտ պատրաստէ, իսկոյն մի աւետարանի գլուխ բանալով տիրացուին ձեռք կուտայ. դու տեսնաս էն ժամանակ մեր տիրացուին կերպարանք, վախէն ասեմ թէ ամօթէն, երեսներ կոկսեն կարմրել բայց Հայրիկ իւր ներտղամիտ բնաւորութեամբ կը քաջալերէ, ամբացուն կոկսի յամր ու կարգելով Աւետարանին մի քանի տողեր կարդալ:

Հայրիկ տեսնելով տիրացուին խեղճութիւնը, կը գառնայ դէպի ներկայացուցիչ ժողովուրդ ուր ես էլ պատահմամբ ներկայ գըտնուեցայ տեսէք ի՞նչ ասաց Հայրիկ ժողովուրդին: Դուք այս տիրացուն բերած էք և կուզէք ձեր գիշղին համար քահանայ ձեռնադրել տամ բայց ահա տեսաք դուք որ ձեր տիրացուն Աւետարան կարող չէ կարդալ: Հապա եթէ եկեղեցւոյ խորհուրդներ հարցնեմ կամ փորձեմ թէ կարդացած Աւետարանի մոքեր կը հասկնայ, ինչ պիտի անէք: Դուք չգիտէք միթէ որ Սինօդի բարձր Աւեանը մի վճիռ արձանագրելով հրատարակած է, որ այսուհետեւ անուսումն անդպրոց տգէտներ քահանայ չձեռնադրուին:

Դուք այժմ մոիկ արէք, ժողովուրդ, Հայրիկին խօսքեր և գիւղական ժողովրդին արդար փաստաբանութիւն:

Հայրիկն սկսեց մի երկար ճառ խօսել իւր ընտանի և ընտան ոճով, թէ քահանայի կոչումն ի՞նչ բարձր նշանակութիւն ունի և թէ նորա պաշտօնին պարտականութիւն քանի մեծ է, թէ նորա մոքի ճրագ պէտք լոյս ունենայ որ ձեզ լոյս տայ: Դուք չգիտէք որ քահանան գիւղական ժողովուրդի աղն է, ձեզ համ պիտի տայ. եթէ քահանան էլ ժողովուրդին հետ միասին անհամ և անպէտք դառնալով, այլ ևս քրիստոնէութեամբ և վարքով անհամ լինի, ի՞նչ կը լինի ժողովուրդին զիճակը, յայտնի է թէ քահանան էլ ժողովուրդին հետ միասին առողջ բերած ենք այս տիրացուն, որ գիւղի ծխական գլուղոցէն ելած ծաղիկն է, և քիչ շատ ժամակարգութեան ճանապարհէն:

Դուք չգիտէք, որ քահանայն ձեր հսկեոր հովիւն է, որ պէտքէ արթուն լինի մտքի աչքով և գիշեր ցորեկ հսկէ ձեր վրայ ինչպէս պահապան հրեշտակ որպէս զի դուք ըստ մալորիք քրիստոնէութեան ուղիղ ճանապարհէն: Կը հարցնեմ ձեզ, դուք ձեր անբան ոչխարներ յիմար և ապուշ հովուին կը յանձնէք. չէ՞ որ ամեն կերպով կաշխատիք սրատես, ճարտար և փորձառու հովիւն ձեռք բերել, որ ձեր ոչխարներ լաւ գիտանայ արածել արթուն աչքով գայլերէն պահպանել, երեսմն ևս հիւանդ ոչխարներուն գեղ ու զարման անել: Դուք երբ այսափ հոգածութիւն կանէք ձեր ոչխարներուն, ինչո՞ւ համար ոչինչ փոյթ չունիք ձեր հոգեւոր հովիւներու ընտրութեան համար, բաւական է որ քահանայի զաւակ լինի, հոգ չէ թէ տգէտ է թէ բարի անուն և բարի վարք չունի և այլն: Դուք էնպէս կարծումէք, որ քահանայութիւն մի ժառանգութիւն է և վախճանած քահանայի որդին իրաւունք ունի ժառանգել անպատճառ իւր հօր երիցութեան պաշտօն: Թողունք այս. յոյժ զարմանալի է, որ շատ ծերացած քահանաներ, ամեն ջանք ի գործ զնում են, որ իրենց կենդանութեան ժամանակ ձեռնադրել տան իրենց որդիք թէ արժանաւոր լինին թէ անարժան:

Աերջապէս ձեր բերած տիրացուն շատ տրգէտէ. քահանայ լինելու ուսումն չունի, լաւ է որ առանց քահանայի մնաք, քան թէ տգէտ քահանայ ունենաք, տարէք, փոխեցէք մի ուրիշ արժանաւոր ուսեալ տիրացու բերէք. ես խօսին ձեռնադրել կուտամ:

Այժմ զուք մոիկ արէք, տեսէք մեր գիւղացի ժողովուրդ ի՞նչ պատասխան կուտան Հայրիկին:

Ե՞՛ Հայրիկ ջան, ի՞նչ գիւրութեամբ խօսում ես, միթէ չգիտես մեր խեղճ գիւղացի ժողովուրդին հալ, մեք աարիներով սպասելով հազար ճորոյ ձեռք բերած ենք այս տիրացուն, որ գիւղի ծխական գլուղոցէն ելած ծաղիկն է, և քիչ շատ ժամակարգութեան մէջ վարժ: Միշտ մեր քահանային գլու-

կան եղել է, առանց ուրարի սարկաւագութիւն կանէ, քարոզներ կը խօսի, բուրվառ կանէ, շարականներ և տաղեր կերպէ, ձայն շատ անուշ ու քաղցր է, այսափէն աւելի էլ ի՞նչ պիտի, մեղ համար շատ ու բաւական է:

Մի բան էլ Հայրիկ, այս աիրացուն գիւղին մէջ ծնած ու մեծած լինելով իրեն վարքն ու բարք մեղի յայտնի է, ինքն պարկեշտ ու հեղ մարդ է և մի քանի զաւակներու հայր, մի բաւութիւն էլ այս է, որ մեղ համար շատ շահաւոր է, երբ քահանան բնիկ մեր գիւղացի լինի, նա հազարժին կունենայ գիւղին մէջ. մեք այլ ևս չենք պարտաւորիք նոր բաժին տալ: Մի բան էլ Հայրիկ ներողութիւն տուր խոստովանաբար խօսիմք:

Մեք աղքատ չքաւոր գիւղացի եմք. շատ անգամ պատահում է, որ մեր քահանայի իրաւոնքը շուտ չենք վճարեր, խեղճ քահանայն միրաւութիւն արեր է, որուի է դրեր, մեռել է թաղեր, ամիսներով կիրկարածքեմք, կան մեր մէջ ծուխեր, Աստուած իրենց խըզմարտանք տաց, որ քահանայի հախ բոլորովին կուտեն:

Է՛ Հայրիկ, հիմի դու դատասահն արա, եթէ մեր քահանան մեր բնիկ գիւղացի լը լինի և մեք երթամք շրջեմք և մեծ զժուարութեամք գտնեմք մի շատ արժանաւոր անձն, որ կանոնաւոր դպրանոցէ ելած բարձր ուսումն ունի, աղաջենք ու պաղատինք թէ արի մեր գիւղին քահանայ եղիր, Տես ի՞նչ կը պատասխանէ: Ես եթէ քահանայ լինիմ կերթամ քաղաքացւոց քահանայ կը լինիմ, որ ուսումն և կրթութիւն ունին և իմ պատիւս ճանաչում են, թէև ինքն գիւղացի է, արեխ ոտք գնացեր մտել է գոլրոց, բան է ոորիթը, փիլիսոփայ դարձել, իսր միոք բարձրացեր, վերացեր մինչեւ ամպեր հասել է, էլ երբ կը խոնարհի, կը դիմանի գիւղական ժողովուրդին քահանայ դառնալ:

Ահա սորա համար է, Հայրիկ, որ մեք մեր տգէտ տիրացուով գոհ պէտք է լինիմք, քա-

նի որ ուսեալ, արժանաւոր անձը մեղ համար շատ հազուագիւտ և թանգ է: Այսպէս մեք խեղճ գիւղացիս ամեն կողմէ անրազդ եմք, մեր ճակատագիրն գուցէ այսպէս է, մեք տղագէտ, մեր քահանան էլ պէտքէ մեղ նման տգէտ լինի: Եթէ թոյլ տաս, Հայրիկ, գիւղացի կոպիտ խելքով մի փիլիսոփայութիւն անենք: Մեզ էնպէս կը թուի, որ տգէտ ժողովուրդին շատ ուսեալ քահանայ չի կափիր և բնական կերպով չեն յարմարիր իրարու: Երբ ժողովուրդ տգէտ է, ի՞նչպէս կարելի է, որ արժանաւոր և ուսեալ քահանային պատիւն ու յարդ ճանչնայ:

Ահա զորա համար է, առաց Հայրիկ, ես կուզեմ, որ գուք սուրբ Գրոց հմուտ և լուսամիտ քահանայ ունենաք, որպէս զի իրունքագ լոյս տայ ձեղ և ձեր խսւարին տգիտութիւն փարատէ: Դուք միթէ չէք լսեր և չէք հասկնար Աւետարանին այն պարզ խօսք, որ ասում է. «Ոչ կարէ կոյր կուրին առաջնորդ. գել և այլն»: Դուք ձեր բերնով կը խոստովա. Նիք թէ մեք տգիտութեամբ կոյր եմք, կը հաւանիք որ ձեր հովիւ, ձեր առաջնորդն էլ ձեղ նման անգէտ և կոյր լինի, սորա վախճան գիտէք ուր կերթայ, թէ առաջնորդող քահանան և թէ ժողովուրդի միասին խորխուրատին մէջ կիյնան:

Հայրիկ, Դու էլ այնչափ տգէտ մի կարծեր զմեղ, որ մեք ձեր ասած այդ բարի և օգտակար խրատներ կարող չեմք հասկնալ շատ լաւ կը մրունեմք, վասն զի գիւղացիքս առջի ժամանակներու պէս այնչափ տգէտ պարզամիտ չենք, որչափ կը կարծուենք. Լաւն ու վատ, չարե ու բարին գիտենք որոշել:

Բայց ի՞նչ անեմք վարանած ու շուարած ենք, Դու էլ գիտես, Հայրիկ, որ ուսեալ և արժանաւոր ընծայացու յունիմք, յունիմք, յունիմք. առաջ ժամանակ չեն ու պայծառ վանքեր մի կրթաբան լինելով մեղ համար ընտիր-ընտիր քարոզիչ վարդապետներ և արժանաւոր քահանաներ պատրաստում էին, այժմ այդ վանքերու շատեր աւերակ գարձան, ափսոս մի քանի վանքեր հազիւ մնա-

ցած էն, որոց մէջ մի մի խեղճ վարդապետ  
արտօւած էն իբրև պահապան:

Հայրիկը մեք զարմանում էնք, երբ Դոք  
դպրոցուկան և արժանաւոր տիրացու պա-  
հանջում էք մեղմէ. միթէ սցդ պարտք մէրն  
է, կամ թէ ժողովուրդ պարտական է սուրբ  
եկեղեցւոյ սպասաւորութեան պէտք լեցնել,  
չէ՞ որ աղդ պարաք բոլոր վիճակաւոր առաջ-  
նորդաց պատկանում է, որոց ջանք պիտի  
լինի միշտ եկեղեցւոյ հոգեւոր պէտքեր հո-  
գալ և պարաստել: Խոկ ամենամեծ պար-  
տիք Մայր Աթոռին է, որուն ձեռք լինելով  
Բարձրագոյն Տեսչութիւն, կրոռդ է ամեն բան  
անօրինել և կարգադրել, մեք վանքերու մէջ  
բնծայրաններ շինել տալ և մեղ համար քա-  
հանայցու պարաստել:

Տեսնում էք, Հայրիկ, դէղոդէզ պարտքե-  
րը կուգան վերջապէս կը դիզուին ձեր վրայ,  
զիտէք որ գիւղական աղքատիկ ժողովուրդ  
իւր կեանքի և հացի համար միայն կարող է  
հոգալ, եթէ մեք առանց հովուի մնամք, Առ-  
առածոյ առաջ պատասխանառուն մեծ Հո-  
վիւն է: Ահա մեք տգէտ տիրացուն կառ-  
նեմք կերթամք, թող վակ մնայ մեր եկե-  
ղեցւոյ դռուր, երեխաններ մնան առանց մը-  
կրտութեան, մեռեններ առանց թաղման,  
ժայովուրդն էլ առանց ժամառ և պատարա-  
գի, մեք մարմնական կեանքն արդէն անմը-  
իիթար ու գառն է, միայն հոգեւոր կեանք,  
եկեղեցին, քահանան, Աւետարան, քրիստո-  
նէական հաւատք և երկնից արքայութիւն  
միր միիթարութիւնն է, եթէ բարձուի մեղմէ  
և մեք խապառ զրկուինք հոգեկան միիթա-  
րութենէն, առ ևս մեղ ինչ կը մնայ, ոպ-  
րել Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ միայն  
սոսկ անունով քրիստոնեայ:

Աերկայացող ժողովուրդին այս վերջի յու-  
սահատ և սրտառուչ խօսքերը լսեց Հայրիկ  
ու լսեց: Ես տեսայ որ նորա սիրու խօս զգա-  
ցումով լցուեցաւ, վասն զի խօս պատւորու-  
թիւն թողեց նորա հոգւոյն վերայ և ձգեց  
զինք մտահոգ թափանութեան մէջ:

Ահա ինչ որ տեսայ և լսեցի լջմիածնայ

Վեհարանին մէջ որանմեցի ձեղ, ժողովուրդ,  
այդ քահանայ խնդրով զիւղոցիք իրենց շա-  
տախոս վաստերով անմեղացիք և արգար են:  
Գիտէք ժողովուրդ, աշխարհիս ամեն զա-  
տակարգի մարդիկ թէ հոգեւորականք և թէ  
աշխարհականք, իւրաքանչիւրն իւր աստիճա-  
նին և պաշտօնին համեմատ պարտքեր ու-  
նի կատարելու, բայց ոմանք շատ անգամ  
ժողովի իրենց պարտքը՝ միշտ պահանջում էն,  
որ ուրիշներ իրենց պարաք կատարեն:

Լսեցիք որ գիւղացի ժողովուրդ պահանջում  
էք հոգեւոր Տեսչութիւն, որ իւր պարտք տեսչու-  
թիւն կատարէ կամ ձեռնադրել տաց իւր ներ-  
կայացուցած տիրացուն և կամ երբ քրն-  
նելով չի հաւնիր, կամէ ագէտ է, ուստեմն  
չունի, անարժան է և այլն, թող ինքն ուսեալ  
և արժանաւոր բնծայացուն պատրաստէ մեզ  
համար: Այս ժողովուրդին այս պահանջն ար-  
գար է, բայց միթէ հոգեւոր Տեսչութիւն ևս  
նոյն ժողովուրդէն պահանջներ չունի կամ  
դուք ինքնին զգալով չէք մնածում որ զուք  
էլ ձեր չափով ու վիճակով ձեր բաժին պարտ-  
քեր ունիք կատարելու: Աթէ ասէք մեք որ-  
գէտ անզիր անուսումն շինական ենք, ոչ  
խորհել գիտենք և ոչ զգալ մեք մեր վա-  
րուցանով զրազում զառն աշխատութեան  
մէջ մարմնով և հոգւով ընկճռւած զաշտի  
մշակներ եմք և այն:

Ահա Արշէն կը անդադար խօսելով քա-  
րողելով պիտի զգացնէ ձեղ, թէ ինչ է ձեր  
պարտքը և երբ գիւղական ժողովուրդ լսե-  
լով իմանայ և զգայ իւր պարտուց նշանա-  
կութիւնը, այլ ևս չի կարող չքմեղս լինել թէ  
անգէտ հմ, ուսման համեն ու ճաշակ չեմ  
ուսեր, չգիտեմ.

Աիրելի ժողովուրդ, ես գրելով և քարո-  
զելով քո ճաշակ պիտի բանամ: Այժմ ոլո-  
քանս բռւական է, գործոն եկած է: Երգում  
է ճախրակ մանիկ, լրձէ լրծէն, երթանք՝ ես  
գէտ ի գորոց իմ զառ, զուք զէտ ի գաշտ  
ձեր գութան:

Ուժ և յաջողութիւն մաղթում է ձեզ՝